Լրամշակված տարբերակ

Երկրորդ ընթերցում

Կ-506[4]-09.03.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՆԵՐԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին» 1998 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-198 Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«տոպոլոգիայի գրանցման հարցերով մտավոր սեփականության բնագավառի օրենքով լիազորված պետական կառավարման համակարգի մարմին, որի մտավոր սեփականության պահպանության հետ կապված, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ գործառույթները սույն օրենքով նախատեսված կարգով իրականացվում է այդ մարմնի մտավոր սեփականության գրասենյակի կողմից (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) տոպոլոգիայի գրանցման թվականով»:

ՏԵՂԵԿԱՆՔ

Երկրորդ ընթերցում

Կ-506[4]-09.03.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՆԵՐԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին» 1998 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-198 Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի ~~2-րդ կետը ձևակերպել~~ 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«տոպոլոգիայի գրանցման հարցերով մտավոր սեփականության բնագավառի օրենքով լիազորված պետական կառավարման համակարգի մարմին, որի մտավոր սեփականության պահպանության հետ կապված, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ գործառույթները սույն օրենքով նախատեսված կարգով իրականացվում է այդ մարմնի մտավոր սեփականության գրասենյակի կողմից (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) տոպոլոգիայի գրանցման թվականով»:

Примечание [ASH1]:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԳՅՈՒՏԵՐԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՆԵՐԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-506[4]-09.03.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	ՀՀ կառավարություն	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ Հոդված 1-ին	Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից առաջ լրացվել է «2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-253-Ն» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները	Ընդունվել է:	Ընդունվել է:

2	**ՀՀ կառավարություն**	«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ Վերնագիր 1-ին հոդված	1. վերնագրում «փոփոխություններ» բառն փոխարինվել «փոփոխություն» բառով՝ նկատի ունենալով, որ նախագծում նախատեսվում է մեկ փոփոխություն: 2. 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից առաջ լրացվել է «2010 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-59-Ն» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 3. 1-ին հոդվածի «պետական լիազոր մարմին» բառերը և նոր խմբագրվող պարբերությունն վերցվել չակերտների մեջ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	**ՀՀ կառավարություն**	«Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ		Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ Վերնագիր 1-ին հոդված	1. վերնագրում «փոփոխություններ» բառն փոխարինվել «փոփոխություն» բառով՝ նկատի ունենալով, որ նախագծում նախատեսվում է մեկ փոփոխություն: 2. 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից առաջ լրացվել է «2010 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-60-Ն» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 3. 1-ին հոդվածի «պետական լիազոր մարմին» բառերը և նոր խմբագրվող պարբերությունն վերցվել չակերտների մեջ:		
4	**ՀՀ կառավարություն**	«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ Վերնագիր		Ընդունվել է:	Ընդունվել է:

		1-ին հոդված	1 . վերնագրում «նշումների» բառն փոխարինվել է «նմուշներ» բառով: 2.«Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից առաջ լրացվել է «2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-111-Ն» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 3. «պետական լիազոր մարմին հասկացությունը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ» բառերն փոխարինվել «1-ին մասի 9-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջները:		
5	**ՀՀ կառավարություն**	Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում		Ընդունվել է:	Ընդունվել է:

		փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ 1-ին հոդված	1. «Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից առաջ լրացվել է «1998 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-198» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: 2. Նոր խմբագրվող պարբերությունը վերցվել է չակերտների մեջ: 3. «2-րդ կետը ձևակերպել» բառերն փոխարինվել է «2-րդ պարբերությունը շարադրել» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ և 33-րդ հոդվածների պահանջները:		